

Ա Ռ Ո Ղ Ջ Ա Կ Ա Ն

(Շարունակութիւն, տես 12թիւ 1875.)

Աստուած, մեր ամենաբարի Հայրը գթած ու մարդասէր լինելուն սահմանած է որ իւր օրինաց դէմ մեզանչողները մէկէն ՚ի մէկ և կատարեալ չքմասուին. կամեցեր է, որ այս մարդկային մարմնոյ գեղեցիկ ու կատարեալ շէնքը անմիջապէս չեղծանի խիստ պատուհասիւ, այլ ձեր զգուշութեան և դարձին համար կամոց կամոց փոքր հարուածներով կը դուշայնէ և հետզհետէ պատուհաս պատուհասի վերայ գալով կը ծանրանայ և ապա մաշելով կեղծանի ինչպէս յառաջ ալ քսած եմ: Այսպէս ահա Աստուած անիոյսիս յիստի օրէնք դրաւ բնութեան մէջ, որ դուք առաջին անգամ այն կրած թեթեւ հիւանդութիւններէն խրատուելով զգուշանաք. այն սկարութիւնները, տենդերը, գլխացաները խորթակ չունենալը, թուրութիւններն ու ծուլութիւնները ձեր սղայական անմեղ ու սիրուն ձայնին դառնալը, գործէ ձանձրանալն ու դժգոհութիւն կրելը, մեղամաղձութիւնները, առանձնասիրութիւնները, գիշերային ակամայ գիծութիւնները որովք առանց հաճոյից իսկ կը մաշիք, և այն և այն բոլոր ձեր կրից պատուհասներն են: Երբ այս ամենը մի առ մի կ'ըստին և կամոց կամոց իրարու հետեւէ կը շարունակեն ու կը սաստկանան, սոքա ամէնքն ալ ձեր կործանման նախընթաց նշաններն են, որք ձեր կենաց սպառազայ աղէտը կը գուժեն ձեզ: Բայց դուք բնու բանի տեղ չէք դնէր զանոնք. նոյն իսկ երբ այս հիւանդութիւնները կը կրէք, այն տանիներն անգամ մի և նոյն միջութեան կը հետեւ-

ւիք, մի և նոյն կիրքերնիդ կը շարք կը գրգռէք ու յագեցնելու կ'աշխատիք, որպէս զի ձեր թշուառութիւնը փութացնէք:

Վարպետ որմնագիրը խախուտ շէնքի մի առաջին անցած տունն երևցած նշաններէն կը գուշակէ նորա կործանումը եւ կ'առաջարկէ, որ շէնքը դարմանուի. եթէ տանուտէրը անհոգ մնայ, օր յաւուր շէնքին նշանները կը սաստկանան, և եթէ յառաջ թեթեւ թամիրով մը պիտի բաւականանար, յետոյ որչափ ուշայնէ այնչափ ալ նորոգութիւնը ծանր ու դժուար պիտի լինի. բայց եթէ բոլորովին անհոգ մը նայ, շէնքը կը կործանի և անհոգ տանտիրոջ չարաչար փնաս տալէ զամ շատ անգամ այլոց եւս կը փնասէ:

Այսպէս ալ Նախասնամութիւնը սահմանած է, որ ձեր տպագայ մեծամեծ փնասուց փոքրիկ նշաններն յառաջուց երեւին ձեր վերայ, որք պէտք են զձեզ սոսկացնել, որոց երեւոյթը կը յայտնեն ձեզ կրօնքը, խոստովանահայրները, բժիշկները և ձեր հաւատարիմ բարեկամները. եթէ բժիշկներն ու խոստովանահայրները ինչ և իցէ նկատումով կամ տգիտութեամբ չեն յայտնէր ձեզ զանցառութիւն կ'ընեն և չեն զգուշայնէր, նոքա իրենց կոչման դէմ կը մեղանշեն. եթէ դուք անկեղծ ու հաւատարիմ բարեկամ չունիք որ յայտնէ, սակայն ձեր երկնային ու բարերար կրօնքը ունիք, որ կը յայտնէ ձեզ թէ՛ «Մեղքին վարձքը մահ է, և հիւանդութիւնք հրաւիրակ են մահու»:

Կրօնքն անաչառ է, բրիտանութիւնը խիստ սիրուն և անկեղծ բարեկամ մի է, որուն խրատներն ու հրահանգները բովանդակ կեանք ու երջանկութիւն են, դուք պէտք է եռանդուն սիրով ուսանիք ձեր կրօնը և ՚ի

գործ դնէք զայն 'ի մանկութենէ , որ պէս զի ձեր բոլոր հասակին մէջ կատարեալ երջանկութիւն վայելէք : Գուք ուրախութեամբ և անդադար բաղձանօր պէտք է ուսանիք ձեր սուրբ ու անհամեմատ կրօնը և նորա հրամանները ու պատուէրները հաւատարմութեամբ 'ի գործ դնէք որպէս զի թէ դուք ազատ մնաք կործանումէ և թէ զայս ազատէք :

Գուք մի կարծէք , որդեակիք իմ , թէ ոմանք բնաւ չեն վնասուիր . անհարին է որ չը վնասուին : Կիրքերը կը դան ու կ'երթան , բայց առանց ի բնոյ սպականիչ նշանը ձգելու չեն անցնիր , թէպէտ և առաջին անգամ ներք նոցա վնասներն զգալի չը լինին , այնու ամենայնիւ վնասը կայ և ձեր առուգութիւնն երթալէն վերջը կ'ըսկրի երեւիլ :

Եթէ մէկը կրից վնասներուն երկար կը տոկայ և երեւելի փոփոխութիւն մի չըզգար , այնպիսին պէտք է գիտնայ որ եթէ իւր կրից թելադրութեան չանսար , եթէ ժուժկալութիւն ունենար , հարկաւ նա այժմեան վայելած կեանքէն աւելի առողջ , աւելի երկար , խաղաղ ու զուարթ կեանք մի պիտի վարէր եւ անլիշտ ու անխռով ծերութիւն մի նա և բնական հանգիստ մահ մի պիտի ունենար առանց երկար հիւանդութեան և տառապանաց :

Արդ՝ որովհետեւ չէ զգուշացած , և իւր մարմնոյն կենաց , հոգւոյն եւ առողջութեանն ու երջանկութեան յարգը չէ ձանջած , որովհետեւ կը բուսած է իւր սնունդը , իւր արիւնը և ուժը , ուստի բնութեամբ որչափ առողջ ու հաստատուն կազմ ունեցած լինի և որչափ երկար տոկոյ , այնու ամենայնիւ Աստուծոյ բնութեան օրինաց մէջ սահմանած և զը

րած վնասները պիտի կրէ , եթէ ոչ այսօր , անշուշտ վաղը , եթէ ոչ այս տարի , հարկաւ եկող կամ միւս տարին , վերջապէս վնաս չը կրել չը լինիր : Ատանկ պտտիր երեւոյթներէ մի խաբուիք և մոլորելով փորձութեան մէջ անկանիք : Մտածեցէք որ երկու հոգի օրը տասն դահեկան կը վատնեն , բայց մէկը հարիւր դահեկան ունի , իսկ միւսը երկու հարիւր , չէ որ հարիւր դահեկան ունեցողնը շուտով պիտի հատնի , իսկ երկու հարիւր ունեցողնը ուշ , բայց հարկաւ պիտի հասնի :

Ինչո՞ւ փայտահատը մի և նոյն կացինով մի և նոյն զօրութեամբ և մի և նոյն հարուածով ծառ մի մէկ քառօրդէն կը կտրէ իսկ ուրիշ ծառ մի երկու ժամէն ալ չէ կարող կտրել , ծառ կայ որ հաստ և պինտ է , ծառ ալ կայ որ բարակ և կախուղ է . սակայն սրչափ ալ հաստ և ամուր լինի , կացինը սրչափ ալ բուժ լինի , այնու ամենայնիւ կարող էք ասել թէ ամեն մէկ հարուած առանց վէրքի և առանց նշանի կ'անցնի , — ո՛չ . — կարող էք ասել թէ շարունակեալ հարուածները չեն կործանէր զայն . քաւ լիցի . ինչ ալ լինի անշուշտ պիտի կործանի , անանկ ալ մարդուս մարմնոյ կազմը . ոմանք տրկուն են , և ոմանք տկար , անոր համար ոմանց վերայ շուտով զգալի կը լինի և ոմանց ուշ :

Կը յուսամ որ սոյն բացատրութենէն և օրինակներէն կարող եղաք հասկանալ և մակաբերել , որ մեր թըւած բոլոր հիւանդութիւններն ու նըշանները միօրինակ կերպով ամենուն վերայ մի և նոյն ժամանակ չեն տեսնուիր . ոմանց վերայ մէկը կամ մէկ քանին կը տեսնուի , ոմանք քիչ ժամանակի մէջ բոլորն ալ կը կրեն , իսկ այլք երկար ատեն միմիայն մէկ նշան մի կամ վնաս մի կունենան . իւրաքան

չեւին իրեն կազմին ու խառնուածոց համեմատ կը պատահի որ մին այս ինչ ներքին կամ արտաքին պատճառաւ կամ ճննդեան ու սերնդեան ինչ ինչ հանգամանքներով իւր մէկ կողմը ջըղերուն այս ինչ մասը կամ զգայարանքը տկար կը լինի . ահա այնպիսոյն նոյն կողմը աւելի շատ և աւելի շատ կը մնասուի . զոր օրիակ , ոմանց ծընկերը կը բռնուին , ոմանք ստամոքսի ցաւ կամ ճնշում կ'ունենան , որ երբեմն այնչափ կը զօրէ , մինչեւ ուշաթափ կ'ընէ զմարդ . ոմանք ականջի ցաւ և կամաց կամաց մինչեւ իսկ խըլուծիւն կ'ունենան , ոմանք աչքի ցաւ , կարծատեսութիւն և կուրուծիւն կ'ունենան , և այլն : Աւրեմն երբ կը տեսնէք որ յայտնի հեշտասէր մի այս ինչ կամ այն ինչ մնասը չէ կրամ , չըլլայ որ երկբայիք , նա անշուշտ ուրիշ չարիք կրամ է և կը կրէ , թողունք այն ներքին վշտերն ու ծածուկ տառապանքները , որք չեն երեւիր , զորս ինքն միայն կը զգայ . բայց որպէս զի իւր սիրամ կուռքէն չը բամուի , որպէս զի իւր սրաշուած մղուծիւնէն չը զատուի , բնաւ չուրէր որ այն ցաւերն անկէ յառաջ և կամ համարի . այս պատճառաւ ընդ հանրապէս անուղղայ կը համարուին նորա, որք իրենց յանցանքը յանցանք չեն համարիր և երբ ուրիշէն յանդիմանուին , կ'աւրանան և արդարանալու կը ձգեն , կամ այլոց յանցանքը ներկայացնելով իրենցը խաբանել կ'աշխատին , նաև նորա , որք իրենց ազրութեան համար իրատ կ'առնուան բայց չեն պահեր , առաջին յանցանքնին կը մոռանան և կիրքերնին կը յաղթէ իւրեանց օգտին , այս պիսիներն շատ անգամ կը գլորին և յաճախ կը մեղանչեն ըստ առածին թէ , « Սխողանքը մոռայցողը կը սկսի նորէն սխալել » . (Շարունակութիւն)

Տարեմուտին օրը հետեւեալ երկու ձառերն կարդացուեցան յառանգաւորաց կազմէն ՚ի նշան որդիական երախտագխտութեան , զորս ՚ի բաջալէրութիւն շարադրողաց կը հրատարակենք : Առաջինը Պատրիարքարանի մէջ կարդացուեցաւ , ուր երբ ըստ սովորութեան թէ միաբանական Ախտը և թէ՛ ժառանգաւոր սանուէր զինի առաւօտեան ժամերգութեան գնացին ու խաւարաց խուռն բազմութեամբ , իսկ երկրորդը վարժարանին մէջ , երբ Ամենա . Ս . Պատրիարքը հայրաբար այց երաւ ժառանգաւորաց , օրհնեց և բաջալերեց զանոնք ազգու ինքրասնեքով :

ԱՄԵՆԱԳՍՏԻՒ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐ
ԵՆ ՊԱՏՐԱՐԿՈՂ ՈՐԿԵՂՈՒԹՅՈՒՆ

Այսօր մարդկային ազգի վրայ արտաբոյ կարգի և սովորականէն դուրս շարժում մը կը նշանուի . այսօր ազգերը և համայն ընտ. թիւեր նոր կեանք և նոր սղի կրողնուն . սուրբեան լուսարբը՝ արեգակը զոյցն սովորականէն աւելի անսարսառաց մէջ կ'երևի մեզ նոր օր աւետելու համար . վերջապէս մայրական և հայրական կողմն ընդունող ամեն ոք ձեռն ՚ի ճնտ ծանր մտածան մէջ կ'երևին . նորա որք իրենց մայրական և հայրական սրտաբերքն ըստ ամենայի կատարած են , այսինքն իրենց զաւակները կրթած են , ուրախ և զուարթ են . և ստոր հակառակ կը անանմը խառն մը մարդիկ ևս՝ որք ամեն հող և մտածանք ՚ի բաց թողլով՝ որպէս թէ այսօր իրենց կենաց սկիզբն է՝ ուրախութեամբ կը խայտան և կը սրտեն , և զուարթութեամբ կը բերկրին : Սակայն սոցա ամեն ուրախութիւնը միայն սրտաբերն է , սոքա իրենց խղիւ հարուածներէն մշտ կը տանջուին չարչար . վստ՝ զի նշանախ ուրախութիւնը միմայն սրտաւոյ կատարանն մէջ է և ոչ այլուր :

Այս ամենուն սրտածոր յայտնի է . այն է՝ հին տարւոյն դաշարումը , որով նորոյն յաջողութիւնը : Գոյցն այսօր որ 1873 թ վերջին և 1874 թ առաջին օրն է , ամեն մարդ , ազգ և աղինք , և ամեն տերութիւնք իրենց զարծոց շարունակութիւնը թողլով՝ անց' լայն վայ ակնարկ մի կը ձգեն , կը դիտեն և կը բնեն անց' այդ թէ ազգի օր ինչպէս անցաւ ,